# ԻՐԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Աննա Գևորգյան*

**Բանալի բառեր՝** *Իրան, Իսլամական խալիֆայություն, քաղաքական միֆեր, այաթոլլահներ, ԻՀՀ արտաքին քաղաքականություն*

Արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունները մշտապես գտնվել են Իրանի ուշադրության կենտրոնում, քանի որ տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող զարգացումներն անմիջական ազդեցություն ունեն Իրանի՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ներքին քաղաքականության վրա: Արաբական երկրներից Սիրիան ու Իրաքը Իրանի գլխավոր դաշնակիցներն են տարածաշրջանում իրենց՝ շիա[1] մուսուլմանների կողմից ղեկավարվող իշխանություններով: Իրանի համար Սիրիայի և Իրաքի շիական համայնքներն ու այդ երկրների իշխանությունները «Շիական ցանցի» գլխավոր բաղադրիչներն են. Շիական ցանցի, որի կենտրոնի դերակատարությունը Իրանն իրեն է վերագրում ու հաջողությամբ կատարում այն: Այս համատեքստում, Սիրիայի և Իրաքի իսլամական պետության, իսկ հիմա արդեն «Իսլամական խալիֆայության» գործողությունները հարվածում են Իրանի՝ Իրաքում ունեցած ազդեցության լծակների վրա, լուրջ սպառնալիք են Իրանի և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության համար:

[1] Սիրիայի դեպքում՝ ալավի

Սույն հոդվածը վերլուծում է Իրանի ղեկավարության ու շիա հոգևորականների արձագանքները «Իսլամական Պետություն» ահաբեկչական կազմակերպության գործողություններին:

Իրանի Իսլամական Հանրապետության իշխանության ղեկավարները իսլամական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանելիս հակված են այդ իրադարձություններին ու Իրանի դերին այդ իրադարաձությունների համատեքստում դիցաբանական նշանակություն հաղորդել: Այս միտումը, որ առկա էր դեռևս այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի հռետորաբանության մեջ, իրագործվում է երկու կարևոր միֆի շրջանառության միջոցով.

1. Գոյություն ունի համաշխարհային դավադիր ուժերի միասնականություն՝ Արևմուտքի գլխավորությամբ ու հակաիսլամական գաղափարախոսությամբ,

2. Իրանը առանձնահատուկ՝ կարևոր ու գլխավոր տեղ ու դեր ունի այդ ուժերի դեմ պայքարում:

Դիցաքաղաքական այս մեկնաբանությունների ու մոտեցումների արդյունքում ձևավորվել են դիցաքաղաքական կաղապարներ, որոնք տարբեր ուժերին ու երևույթներին վերագրելիս նրանց է հաղորդվում նաև այդ կաղապարի ստեղծմանը նպաստած դիցաբանական հենքի ողջ բովանդակությունը: Այսպես, Արևմուտքի գլխավորությամբ դավադրական հակաիսլամական վերացական կառույցի խորհրդանիշը դարձած «շեյթան»՝ սատանա բառը որևէ խմբին նկարագրելիս օգտագործելու դեպքում, այդ խմբին է փոխանցվում նաև դավադրական տեսության ողջ բովանդակությունը: Պատահական չէ, որ Իրանի իշխանությունները «շեյթանի» մասնակցությունն են տեսնում նաև «Իսլամական պետության»

(այսուհետ՝ ԻՊ)[2] գործողություններում՝ այսպիսով նրանց դնելով դավադրաբանական միֆոլոգեմի համատեքստում, որի չեզոքացման, ոչնչացման ճանապարհին Իրանին վերագրում են առանցքային դեր: ԻՊ-ին «դաեշ» ու «անհավատ ահաբեկիչներ» անվանելը նշանային համակարգի տեսանկյունից կարևոր դեր է խաղում Իրանի իշխանությունների ուղերձը հասանելի ու հասկանալի դարձնելու համար. «դաեշ»-ը մի «հրեշ» է, որ կապ չունի իսլամի ու իսլամականի հետ, նրանք ոչ միայն ահաբեկիչներ են, այլև «անհավատ ահաբեկիչներ», ինչը մեկ անգամ ևս ընդգծում է Իրանի կողմից նրանց անընդունելի, մերժելի, դատապարտելի լինելու հանգամանքը:

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության վերլուծություն անելիս պետք է հաշվի առնել, որ շատ հաճախ թեև նրա հարաբերությունները այլ երկրների հետ ղեկավարվում են պրագմատիկ քաղաքականության ու ռեալպոլիտիկի միջոցով, սակայն այդ քաղաքականության համատեքստն ու ազգային խոսույթը ձևավորվում է որոշակի միֆերի[3] շնորհիվ[4]:

Ժամանակակից պատմագիտությունն ու քաղաքա–գիտությունը այսօր առաջնորդվում են այն տեսությամբ, ըստ որի՝

[2] «Իրաքի ու Սիրիայի իսլամական պետության» ներկայացուցիչները իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում խալիֆայություն հռչակեցին 2014 թվականի հունիսի 29-ին, http://www.slate.com/articles/news_and_politics/war_stories/2014/07/iraq_isis_leader_abu_bakr_al_baghdadi_names_himself_caliph.html.

[3] Վենդի Դոնիգեր Օֆլահերթիի ձևակերպմամբ՝ «Միֆը պատում է, որ ընդհանուր ու սուրբ է մի խումբ մարդկանց համար, որոնք իրենց ամենակարևոր իմաստներն են գտնում դրա մեջ. դա մի պատում է, որը համարվում է, որ ստեղծվել է անցյալում անցյալի կամ շատ հազվադեպ ապագայի որևէ իրադարձության մասին: Իրադարձություն, որ շարունակում է իմաստ ունենալ նաև ներկայում, քանի որ հիշվում է»: Տես՝ Mali J., Mythistory: The Making of a Modern Mythistory, University of Chicago, 2003, p. 4.

[4] Rieffer-Flanagan B. A., Islamic real politic: two-level Iranian Foreign policy, *International Journal on World Peace,* Vol. 26, No. 4 (DECEMBER 2009), p. 8.

որպեսզի իմանաս, թե ովքեր են օրինակ իրանցիները, պետք է իմանալ, թե իրենք ինչ են մտածում իրենց՝ ով լինելու, իրենց ծագման ու իրենց առաքելությունների մասին: Իսկ այդպիսի գիտելիքներին տիրապետելու լավագույն ուղին նրանց պատմական միֆերի իմացությունն է[5]:

Գրականագետ, մշակութաբան Յուրի Միխայիլի Լոտմանը իր «Միֆ, անուն, մշակույթ» հոդվածում գրում է. «...Կարևոր է տարբերակել այն մշակույթները, որոնք հակված են միֆոլոգիական մտածողության այն մշակույթներից, որոնք հակված են ոչ միֆոլոգիական մտածողության»[6]: Իրանի մշակույթը՝ որպես արևելյան մշակույթ, միֆոլոգիական մտածողությամբ մշակույթ է. մշակույթ, որում միֆերը կարևոր ու առանցքային տեղ ու նշանակություն ունեն, որում միֆերը մարդու, քաղաքացու առօրեականության մի մասն են և ոչ առանձին մի աշխարհ[7]: Իրանական քաղաքական ու հանրային մշակույթում[8] միֆերը միշտ իրենց ուրույն տեղն են ունեցել, ավելին, այդ մշակույթների հիմքն են հանդիսանում: Իրանական քաղաքական խոսույթում միֆերի դերակատարությանն է անդրադարձել քսաներորդ դարի իրանցի մտավորական Ջալալ Ալե Ահմադը: Նրա խոսքերով՝ իրանական քաղաքական մշակույթում «միֆերը իրականությունից ավելի իրական են»[9]:

---

[5]Նույն տեղում, էջ 4:

[6] Лотман Ю. М., Миф, имя, культура, http://www.gumer.info/bibliotek_Buks/Literat/Lotm/mif_im.php .

[7] Hofeyda F., The shah and the Ayatollah, Westport, Connecticut, London, 2003, p. iii.

[8] Քաղաքական մշակույթը «էմպիրիկ հավատալիքների, էքսպրեսիվ խորհրդանիշների ու արժեքների համակարգ է, որ կանխորոշում է այն իրավիճակը, որում տեղի է ունենում քաղաքական գործողությունը»: Տես՝ Lucian W. Pye, Political Culture and Political Development, Princeton University Press, 1965.

[9] Al-e Ahmad, *Kar-nameh-ye Seh Saleh*, Tehran, 1979, p. 183.

Ինչպես նշում է Ֆերեյդուն Հովեյդան՝ «շարունակակա–նությունը Իրանի պատմության տարբերակիչ պիտակն է»[10] և միֆերի ու միֆական մտածողության մեծ դերակատարումը այդ պատմության կերտման մեջ նույնպես շարունակական ավանդույթ է: Միֆոլոգիական մտածողության արդյունքում իրանական մշակույթը ծնում է միֆերով կառուցակցված հանրային ու քաղաքական խոսույթներ: Միֆերով կառուցակցված քաղաքական խոսույթները գերակշռում էին ինչպես Իրանի մինչհեղափոխական, այնպես էլ հեղափոխական ու ետհեղափոխական ժամանակշրջանում: Հեղափոխական խոսույթի կառուցակցումը անխուսափելիորեն հանգեցրել է ապստամբության միֆոլոգիայի կոլեկտիվ կառուցակցման[11]: Իրանի Իսլամական հեղափոխության քաղաքական խոսույթի հիմքում ընկած միֆի լեզուն դժգոհության լեզու է, որը կարիք ունի «վիրավորված» ԵՍ-ի ու թշնամական ԱՅԼ-ի: «Արևմուտք» կոչված թշնամական այս ԱՅԼ-ի դեմ պայքարը հեղափոխության գլխավոր շարժիչ ուժերից մեկն էր ու շարունակում է այդպիսին լինել նաև այսօր, երբ ժամանակշրջանը, թեև ետհեղափոխական է կոչվում, բայց հեղափոխությունը դեռ շարունակվում է[12]: ԱՅԼ-ի դեմ պայքարի, ընդվզման լեզուն աստվածաբանական լեզու է՝ իր միֆական կերպարներով ու նրանց միֆոլոգիական մտածելակերպով լեզուն:

Կարելի է պնդել, որ զոհի մասին միֆը, բռնաճնշվածներին օգնելու կրոնական մոլեռանդության հետ միաձուլվելով, դարձել է

[10] Hofeyda F., The shah and the Ayatollah, Westport, Connecticut, London, 2003, p. xxxii.
[11] Dabashi H., Theology of discontent: The ideological foundation of the Islamic revolution in Iran, New-York, 1993, p. 5.
[12] Hougloond E., Twenty years of Islamic revolution: Political and social transition in Iran from 1979, New York, 2002.

ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության ուղենիշը:[13] Զոհերին օգնելու աներկբա առաքելության մասին այս միֆի արմատները սերում են շիական իսլամից. փոքրամասնություն լինելով՝ շիաները միշտ հետապնդումների ու բռնաճնշումների են ենթարկվել սուննիների կողմից: Ու թեև Իրանում շիաները մեծամասնություն են կազմում ու Իրանի Իսլամական Հանրապետությունն էլ շիական պետություն է, բայց պետության քաղաքական խոսույթը շարունակում է մնալ զոհի մասին միֆական պատումներով հյուսված խոսույթ: Զոհի մասին այս միֆը, սակայն, երկշերտ, երկիմաստ միֆ է՝ միֆ է Իրանի մասին՝ որպես զոհի ու Իրանի մասին՝ որպես զոհերին օգնող ուժի: Այս միֆը հիմքում ունենալով են կառուցակցվում Իրանի արձագանքները արտաքին աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին: Յուրաքանչյուր նոր իրադարձության դեպքում զոհերին օգնության հասնող Իրանի մասին միֆը վերափոխվում, փոխակերպվում է ու ադապտացվում է՝ նոր միֆերի ստեղծման կամ հին միֆերի վերաիմաստավորման միջոցով: Տեղի է ունենում քաղաքական միֆաստեղծում, որ օգնում է բացատրել, արդարացնել ու իրանական հանրության համար ըմբռնելի դարձնել Իրանի արտաքին քաղաքականությունը: Իսկ միֆերի ստեղծումը ոչ այլ ինչ է, քան արխետիպերի վերափոխում արտաքին աշխարհի օբյեկտների լեզվով բնութագրվող կերպարների[14] կամ միֆոլոգեմների[15] ադապտացում որևէ

[13] Ansari A., Confronting Iran: The Failure of American Foreign Policy and the Roots of Mistrust, London: C Hurst & Co Publishers Ltd, 2006, p. 5.

[14] Аверинцев С., “Архетипы”, в “Мифы народов мира”, *Энциклопедия.* М., 1980. - Т. 1. с. 110-111, http://philologos.narod.ru/myth/archetype.htm

[15] Միֆոլոգեմը և՛ միֆոլոգիական նյութն է, և՛ հիմք՝ նոր միֆոլոգիական նյութի համար: Յունգը գրում է.«Միֆոլոգեմ՝ ահա լավագույն հինհունական բառը նկարագրելու համար այն իրադարձությունները, որոնք բոլորին լավ հայտնի են, բայց հեռու են վերջնական ձևավորումից ու շարունակում են հիմք ծառայել նոր ստեղծագործությունների համար» : Տես՝, Юнг К. Г., Душа и миф: шесть архетипов. М., 1997, с. 13.

կոնկրետ իրադրության: Այսպես, արտաքին թշնամու դեմ պայքարող իրանցիները դառնում են «հուսեյններ» ու «հասաններ», իսլամական պետությունների «զոհերին» օգնության ձեռք մեկնած իրանական ուժերը դառնում են «ալիներ», որ մեկնում են «քուֆացիներին» օգնելու[16]: Արխետիպերի վերակենդանացման, ժամանակակից լեզվով բնութագրման գործընթացը տարածվում է նաև թշնամու վրա ու «ծնվում են» նոր «մուավիաներ», «խարիջիներ» ու «քուֆացիներ»[17]: Զոհի մասին այս միֆոլոգեմը օգտագործում էր նաև այաթոլլահ իմամ Խոմեյնին՝ իրան-իրաքյան պատերազմին մասնակցության կոչեր անելիս: Նրա պնդմամբ. «Սա պատերազմ չէ երկու կառավարությունների միջև, սա սրբապղծության ու չարքի պատերազմն է ընդդեմ իսլամի»[18]:

---

[16] Ալ-Հուսեյնը (626-680թթ.) Մարգարեի դուստր Ֆաթիմայի ու Ալի իբն Աբի Տալիբի կրտսեր որդին է, շիական երրրորդ իմամը: Քուֆայի շիաները Հուսեյնին՝ որպես երրորդ իմամ ընդունելով, նրան հորդորում են Քուֆա մեկնել ու առաջնորդել նրանց ապստամբությունը ընդդեմ Յազիդ խալիֆի (680-683թթ.)՝ նրան լայն ժողովրդական աջակցություն խոստանալով: Հուսեյնը ընդառաջում է նրանց խնդրանքին, փոքրիկ մի ջոկատով մեկնում Քուֆա, սակայն աջակցություն չստանալով ու թշնամու դեմ փոքրաքանակ իր զորքով մնալով, նահատակվում է: Տես՝ ал-Хусейн, Ислам. Энциклопедический словарь. М.: «Наука», Главная редакция восточной литературы, 1991, стр. 285.

Ալ-Հասան (մահ. 669թ.) Ալիի և ֆաթիմայի ավագ որդին, Մարգարեի թոռը, շիական երկրորդ իմամը: Տես՝ ал-Хасан, Ислам. Энциклопедический словарь. М.: «Наука», Главная редакция восточной литературы, 1991, стр. 276.

Ալի իբն Աբի Տալիբը (656-660թթ.) չորրորդ ուղղադավան խալիֆն է, Մուհամմադ մարգարեի եղբորորդին ու փեսան: Ալիի անվան հետ է կապված իսլամում շիական ուղղության ծագումը:

[17] Մուավիան (605-680թթ.) առաջին Օմայյան խալիֆն է, որը Օսման (644-656թթ.) խալիֆի սպանությունից հետո հրաժարվում է Ալի իբն Աբի Տալիբին (656-660թթ.) խալիֆ ընդունել ու նրան մեղադրում է սպանության մեղսակից լինելու մեջ:

Խարիջիները իսլամի պատմության ամենավաղ կրոնա-քաղաքական խմբավորման հետևորդներն են: Խմբավորումը ձևավորվել էր Ալի իբն Աբի Տալիբի ու Մուավիայի միջև հանուն խալիֆայությունում գերագույն իշխանության ընթացող պայքարի համատեքստում:

[18] Rieffer-Flanagan B. A., Islamic realpolitik: two-level Iranian Foreign Policy, *International Journal on World Peace*, Vol. 26, No. 4 (DECEMBER 2009), p. 12.

Իրան-իրաքյան պատերազմին այսպիսի դիցաբանական մոտեցման արդյունքում է, որ այսօր իրանցիները հակասություն չեն տեսնում իրաքցիների կողքին կանգնելու ու նրանց օգնելու մեջ այն դեպքում, երբ ընդամենը երեք տասնամյակ առաջ կռվում էին նրանց դեմ: Պատերազմն ու «թշնամու» էությունը չեն փոխվել. նրանք այսօր էլ, ինչպես երեսուն տարի առաջ կռվում են սրբապիղծների ու իսլամն անարգողների դեմ: Հատկանշական է, որ Իրաքում կռվող իրանական ստորաբաժանումների հրամանատարը Իրան-իրաքյան պատերազմի վետերան Ղասեմ Սուլեյմանին է[19]: Իսկ «Արբայինի»[20] ծիսակատարությունների ժամանակ Քերբալայի ժամանակավոր քաղաքապետ նշանակված Թեհրանի քաղաքապետը նույնպես Իրան-իրաքյան պատերազմի վետերան Մուհամեդ Բաղեր Ղալիբաֆն էր[21]:

Չնայած այն հանգամանքին, որ ԻՊ-ը իր գործողությունները մեկնաբանում ու բացատրում է բացառապես կրոնական ելակետից, Իրանի ղեկավարությունը նրանց համարում է ԱՄՆ գործակալներ ու Արևմուտքի շահերի պաշտպաններ, ահաբեկչական տարրեր, որոնք որևէ առնչություն չունեն իսլամի ու իսլամականի հետ:

Իրանի ղեկավարության ու շիա հոգևորականների այս մոտեցումը բնորոշ էր նաև նրանց արձագանքներին Սիրիայում ու Բահրեյնում տեղի ունեցող բախումներին: Թեև երկու երկրներում էլ կրոնական հողի վրա՝ սուննի-շիա մուսուլմանների միջև

---

[19] حضور سردار سلیمانی در عراق مایه دلگرمی مبارزان عراق است
http://www.irna.ir/fa/News/81421205/, (մուտք՝ 10.12.2014)

[20] Աշուրայից հետո քառասուներորդ օրը՝ իմամ Հուսեյնին նվիրված սգո օրերից մեկը, որ ընդունված է անցկացնել նրա գերեզմանի (Քերբալայում) մոտ սգալով: Տես՝ M. Ayoub, ARBAʿĪN, Encyclopædia Iranica, online edition, 2012, http://www.iranicaonline.org/articles/arbain-fortieth-day-after-asura-q

[21] قالیباف شهردار کربلا می‌شود
http://rasad.irna.ir/fullnews/FFFC33994074.html, (մուտք՝ 10.12.2014)

բախումներ էին տեղի ունենում, բայց Իրանի հոգևորականները այդ բախումների դրդապատճառ էին համարում այն հանգամանքը, որ վերոնշյալ երկրներում հասարակությունները բաժանվում են երկու մասի՝ նրանց, ովքեր ազատ երկիր ունենալու կողմնակիցներ են ու նրանց, ովքեր ԱՄՆ-ի կամակատարներն են: Այս բախումների, իսկ Սիրիայի դեպքում նաև պատերազմի՝ ոչ թե կոնֆեսիոնալ, այլ հակահալամական բնույթը շեշտելու համար, շիա հոգևորականները խռովարարներին բնորոշում են «ֆեթնեգյարան» (խռովարարներ) և «թաքֆիր» (անհավատ, ուրացող) կրոնական տերմիններով: Այս տերմինների գործածությունը մատնանշում է այսօրվա իրադարձությունների և շիաների առաջին իմամ Ալիի դեմ դուրս եկած խռովարարների միջև նմանությունը, ըստ էության նույնականացումը:

ԻՊ-ի ստեղծման հենց սկզբից Իրանի ու Իրաքի շիա հոգևորականները դատապարտում էին նրանց գործողություններն ու միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում այն փաստի վրա, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նրանց ընթացքը կասեցնելու համար: Ի տարբերություն Սիրիայի, որտեղ կա Բաշար ալ-Ասադ և շիական-ալավիական համայնք, Իրաքում ոչ միայն մեծաքանակ շիական համայնքն է կարևոր գործոն Իրանի ու շիաների համար, այլև Իրաքի շիական սրբավայրերը՝ Քերբալան ու Նաջաֆը, որոնց պաշտպանության համար պատասխանատվություն են կրում ոչ միայն Իրաքի, այլև համայն աշխարհի և հատկապես Իրանի շիաները:

2014 թվականի հունիսի 10-ին Իրաքի Մոսուլ քաղաքը ԻՊ-ի կողմից գրավվելուց ու ավերվելուց անմիջապես հետո, Իրանում Սիրիայի դեսպանի հետ հանդիպման ժամանակ Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանին կարծիք հայտնեց, որ «ահաբեկչական տարրերի նվաճումներն ու նրանց կատարած դաժան գործողություններն

Իրաքում զգուշացում են տարածաշրջանի երկրների համար»: Նրա խոսքով. «Կառավարություններն ու միջազգային հանրությունը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն «դաեշ»-ի չարիքը կասեցնելու համար»[22]:

Նույն օրը Իրանի արտաքին գործերի նախարարության մամլո խոսնակ Մարզիե Աֆխամը իր հերթական մամլո ասուլիսի ժամանակ անդրադարձավ նաև Իրաքում տեղի ունեցող դեպքերին ու նշեց, որ «Իրանը զգուշացնում էր, որ ահաբեկչությունը մի երկրի ու մի տարածաշրջանի խնդիր չի և որ այն տարածվելու է նաև այլ երկրներ, ինչի ականատեսն ենք այսօր»[23]: Նա նույնպես իր խոսքում կարևորեց բոլոր երկրների և միջազգային հանրության միասնականության անհրաժեշտությունը՝ ահաբեկչության դեմ հաջող պայքար իրականացնելու համար[24]:

Իսկ հունիսի վերջին արդեն, երբ ԻՊ-ի գործողությունների արդյունքում նորանոր իրաքյան քաղաքներ էին գրավվում, Իրանի զինված ուժերի հրամանատարի տեղակալ Մասուդ Ջազայերին հայտարարեց, որ Իրանը պատրաստ է օգնել Իրաքին՝ պայքարել ահաբեկիչների դեմ: Նրա խոսքով «այնպես, ինչպես Սիրիայում, Իրաքում նույնպես Իրանը թույլ չի տա, որ ահաբեկիչները հասնեն իրենց նպատակներին»[25]:

---

[22] شمخانی: توسعه حضور تروریست های داعش در عراق زنگ خطری برای منطقه است
http://irna.ir/fa/News/81196655/%D8%B3%D8%A7%DB%8C%D8%B1/%D8%B4%D9%85%D8%AE%D8%A7%D9%86%DB%8C__%D8%A7%D9%86%D8%AA%D8%AE%D8%A7%D8%A8%D8%A7%D8%AA_%D8%A2%D8%B2%D8%A7%D8%AF_%D9%BE%D8%A7%DB%8C%D8%A7%D9%86%DB%8C_%D8%A8%D8%B1_%D8%A8%D9%87%D8%A7%D9%86%D9%87_%D9%87%D8%A7%DB%8C_%D8%A8%D8%AD%D8%B1%D8%A7%D9%86_%D8%A2%D9%81%D8%B1%DB%8C%D9%86_%D8%AF%D8%B1_%D8%B3%D9%88%D8%B1%DB%8C%D9%87_%D8%A7%D8%B3%D8%AA, (մուտք՝ 11.06. 2014):

[23] اظهارات سخنگوي وزارت امورخارجه درجمع خبرنگاران داخلي وخارجي
http://mfa.gov.ir/index.aspx?fkeyid=&siteid=1&pageid=2121&newsview=294358, (մուտք՝ 11.06.2014):

[24] Նույն տեղում:

[25] سردار جزایری: عربستان از مجریان طرح در منطقه است

Իրաքի ժողովրդին օգնելու ու շիական սրբավայրերը պաշպանելու վերաբերյալ իրանական ղեկավարության հայտարարությունները կառուցվում էին չափազանց զգուշավոր բառապաշարով ու հռետորաբանությամբ: Մի կողմից, Իրանի ղեկավարությունը, ի դեմս, երկրի նախագահ Հասան Ռուհանիի իր պարտքն էր համարում «լինել Նաջաֆի, Քերբալայի ու Սամարայի կողքին», մյուս կողմից շեշտվում էր այն հանգամանքը, որ Իրանը երբևէ չի միջամտել այլ երկրի ներքին գործերին և որ Իրաքին պատրաստ է օգնել միայն անհարաժեշտության ու Իրաքի կողմից հավանական նախաձեռնության դեպքում[26]:

Այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու և այլ երկիր զորք չուղարկելու քաղաքականությունը Իրանի ղեկավարությունը շեշտում է հատկապես այն պատճառով, որ նրա համար անընդունելի է ԱՄՆ-ի ցանկությունը՝ մուտք գործել Իրաք՝ ահաբեկիչների դեմ պայքարելու համար: ԱՄՆ-ի այս ցանկությունը Իրանում մեկնաբանում են որպես փորձ՝ Իրաքը «վերածել Պակիստանի, որտեղ նա (ԱՄՆ-ն) ռմբակոծում է ինչ ուզում է և երբ ուզում է[27]»: Իրանի համար անընդունելի է ցանկացած արտատարածաշրջանային ուժի միջամտությունն ու մասնակցությունը տարածաշրջանի իրադարձություններին: Պաշտոնական Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ եթե չլինեն

---

http://www.persian.rfi.fr/%D8%A8%D9%87-%DA%AF%D9%81%D8%AA%D9%87-%D8%B3%D8%B1%D8%AF%D8%A7%D8%B1%D8%AC%D8%B2%D8%A7%DB%8C%D8%B1%DB%8C-%D8%B9%D8%B1%D8%A8%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%A7%D8%B2%D9%85%D8%AC%D8%B1%DB%8C%D8%A7%D9%86-%D8%B7%D8%B1%D8%AD-%D8%AF%D8%B1%D9%85%D9%86%D8%B7%D9%82%D9%87-%D8%A7%D8%B3%D8%AA-20140629/%D8%AE%D8%A7%D9%88%D8%B1-%D9%85%DB%8C%D8%A7%D9%86%D9%87, (մուտք՝ 01.07.2014):

[26] متن کامل سخنان رییس‌جمهور در جمع مردم لرستان/ قول روحاني براي تکمیل سدهاي استان http://yaftenews.ir/index.php/newss/political/4580-alexa-google-yahoo2171, (մուտք՝ 20.06.2014):

[27] کری شخصا از ظریف درخواست همکاری کرده بود/ آمریکا میخواهد عراق را تبدیل به پاکستانی دیگر کند http://www.ettehadjonoub.ir/fa/posts/34603, (մուտք՝ 20.09.2014):

արտաքին ուժերի ֆինանսական ու ռազմական աջակցությունները, ապա տարածաշրջանի երկրներն ինքնուրույն կկարողանան լուծել իրենց երկրների ներքին խնդիրները, այդ թվում հաղթահարելով նաև ահաբեկիչների մարտահրավերները: Հատկապես Սիրիայի ու Իրաքի իրադարձությունները մեկնաբանելիս Իրանը շեշտում է, որ «կոնֆեսիոնալ բախումները» հրահրված են բացառապես Արևմուտքի ու նրա հովանավորյալ Սաուդյան Արաբիայի կողմից և որ նրանց նպատակը տարածաշրջանում բախման նոր օջախներ ու ռազմական միջամտության նոր առիթներ ստեղծելն է:

Մինչ Իրանի ուժային կառույցների ու դիվանագիտական շրջանակների ներկայացուցիչները միջազգային հանրության ուշադրությունը սևեռում էին Իրաքի խնդրի վրա, երկրի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին դատապարտում էր ԱՄՆ-ի նպատակը՝ միջամտել Իրաքի հիմնախնդրին: Նա իր ելույթներից մեկում շեշտեց, որ Իրաքում չկա սուննի-շիա հակամարտություն, այլ կա ազատատենչների ու ԱՄՆ-ի դաշնակիցների միջև պայքար[28]: Ըստ Խամենեիի՝ «Իրաքում ծայրահեղականները պայքարում են և՛ սուննիների, և՛ շիաների դեմ, բոլոր նրանց դեմ, ովքեր անկախ ու ազատ Իրաքի կողմնակիցներն են»[29]: Իրանի հոգևոր առաջնորդը վստահություն հայտնեց, որ Իրաքի ժողովուրդն ու ղեկավարությունը ի վիճակի են սեփական ուժերով պայքարելու ահաբեկիչների դեմ: Նա իր ելույթում ընդգծեց Իրաքի ժողովրդի համախմբման ու չարիքի դեմ համատեղ ուժերով պայքարելու անհրաժեշտությունը:

---

[28] وضعیت فعلی منطقه و عراق نتیجه سیاست‌های غیرمسئولانه برخی کشورها در سوریه است/ اعتمادی به صداقت مدعیان مبارزه با داعش نداریم ۲۹/۰۷/۱۳۹۳ - ۱۸:۱۱
http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=12508, (մուտք՝ 22.10.2014):

[29] Նույն տեղում:

Հոգևոր առաջնորդն իր տարբեր ելույթներում անդրադարձել է նաև ԱՄՆ-ի կոչերին՝ Իրանի հետ համատեղ պայքարել ԻՊ-ի դեմ: հոգևոր առաջնորդն ընդգծում է, որ Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարար Մուհամադ Զարիֆի ու այլ պաշտոնյաների միջոցով փոխանցել է իր բացասական պատասխանը: «Ես հենց սկզբից «ո՛չ» ասացի միասնական ուժերով ահաբեկիչների դեմ պայքարին, որովհետև նրանց (ԱՄՆ-ի) ձեռքերը կեղտոտ են: Նրանք ահաբեկիչների դեմ պայքարի քողի ներքո իրենց շահերն են առաջ տանում»:[30]

Իրաքի շիաներին համախմբվելու ու Իսլամական պետության ահաբեկիչների դեմ պայքարելու կոչով հանդես եկավ նաև Իրաքի ամենաազդեցիկ շիա հոգևորական Ալի Սիսթանին: Պետք է ընդգծել Ալի Սիսթանիի անառարկելի հեղինակությունը շիա մուսուլմանների շրջանում: Շիա մուսուլմանների շրջանում Ալի Սիսթանիից ավելի ազդեցիկ համարվում է միայն Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին՝ հաշվի առնելով նրա՝ ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական իշխանությունը: Սիսթանին, որ հայտնի է իր «քաղաքականությունից հեռու» ու լռակյաց բնավորությամբ, խաղաղասիրության մարմնացում է ոչ միայն մուսուլմանների և հատկապես շիաների, այլև այլադավանների համար: Պատահական չէ, որ տարիներ առաջ ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի բնակիչները ստորագրահավաք էին կազմակերպել

[30] انعکاس بیانات مقام معظم رهبری درباره مبارزه با داعش در رسانه‌های خارجی
http://www.isna.ir/fa/news/93062414628/%D8%A7%D9%86%D8%B9%DA%A9%D8%A7%D8%B3-%D8%A8%DB%8C%D8%A7%D9%86%D8%A7%D8%AA-%D9%85%D9%82%D8%A7%D9%85-%D9%85%D8%B9%D8%B8%D9%85-%D8%B1%D9%87%D8%A8%D8%B1%DB%8C-%D8%AF%D8%B1%D8%A8%D8%A7%D8%B1%D9%87-%D9%85%D8%A8%D8%A7%D8%B1%D8%B2%D9%87, (մուտք՝ 04.11.2014):

նրան Խաղաղության նոբելյան մրցանակի թեկնածուների ցանկում ընդգրկելու համար[31]:

Իրաքում տեղի ունեցող դեպքերին արձագանքելիս շիա հոգևորականները ջանում էին ընդգծել ու կարևորել երկու բան. նախ, որ ԻՊ-ի սպառնալիքը պետք է խթան դառնա բոլոր շիաների միախմբման ու միասնության համար, և երկրորդ, որ ԻՊ-ն, իրականում, ոչ թե սուննիական, այլ հակահիսլամական ահաբեկչական տարր է՝ սիոնիստական ուժերի կողմից հովանավորվող և որ նրա ու առհասարակ իսլամի դեմ կռվող բոլոր ուժերի դեմ հաղթական պայքարի համար անհրաժեշտ է բոլոր մուսուլմանների համախմբումը:

Պատահական չէ, որ այն օրերին, երբ համաշխարհային հանրության ուշադրությունը սևեռված էր Իրաքում ԻՊ-ի դաժան գործողությունների վրա, Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ հանդիպումներից մեկի ընթացքում հնչեցրած իր ելույթում ծավալուն անդրադարձ կատարեց «համաշխարհային կարգի» փոփոխությունների ժամանակակից միտումներին, արևմտյան ուժերի ազդեցությանն ու նպատակներին այդ միտումների հետ կապված և Իրանի ու աշխարհի շիաների դերակատարությանը ստեղծվող նոր իրականության մեջ[32]:

Իր ելույթում, որ կառուցված էր ավանդական դարձած հակաամերիկյան հռետորաբանությամբ, Ալի Խամենեին ընդգծեց այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն նպատակներին հասնելու ու աշխարհը միաբևեռ, իր կողմից կառավարվող օբյեկտ դարձնելու համար կիրառում է երկու մարտավարություն:

---

[31] Խաղաղասերի նրա կերպարը, սակայն, բացասական նրբերանգներ ստացավ նրա այն ֆեթվայից հետո, որը վերաբերում էր միասեռականներին առանձնահատուկ դաժանությամբ սպանելու կոչին:

[32] بیانات در دیدار با اعضای مجلس خبرگان رهبری
http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanat&id=12216, ( մուտք՝ 15.07.2014):

Մի դեպքում նա փորձում է իր արժեքները, գաղափարները պարտադրել ու մշակութային էքսպանսիայի միջոցով հասնել իր քաղաքական նկրտումներին, իսկ մյուս դեպքում, մեծամասամբ առաջին մարտավարության ձախողման պատճառով, կիրառում է քաղաքական ու ռազմական միջոցներ[33]: Սիրիայում ու Իրաքում տեղի ունեցող գործողությունները Իրանի հոգևոր առաջնորդը բացատրում է ԱՄՆ-ի կողմից վերոնշյալ երկրորդ մարտավարության կիրառման օրինակ: Այաթոլլահ Խամենեիի համար կասկած անգամ չկա, որ ԻՊ-ն ԱՄՆ-ի ու ԱՄՆ-ի դաշնակից Սաուդյան Արաբիայի կողմից հովանավորվող ահաբեկչական կազմակերպություն է, որի միջոցով «մեծ շեյթանը» միջկոնֆեսիոնալ բախումներ ու դաժան պատերազմներ է հրահրում մի տարածաշրջանում, որտեղ իսլամն է իշխում և որտեղ «սուննի ու շիա մուսուլմանները դարեր շարունակ ապրել են կողք-կողքի՝ խաղաղ ու ներդաշնակ»[34]:

Աշխարհաքաղաքականության այս նոր իրավիճակի մասին խոսելիս այաթոլլահ Խամենեին Իրանի Իսլամական Հանրապետության ու շիաների իրավիճակն ու դերակատարությունը համեմատեց Մուհամմադ մարգարեի դերակատարության հետ՝ շեյթանի դեմ պատերազմում: Ըստ նրա՝ ժամն օրհասական է իրական մուսուլմանի համար. համախմբման ու համատեղ ուժերով շեյթանի դեմ պայքարելուն այլընտրանք չկա[35]: Հետաքրքիր է, որ «շեյթանի դեմ պայքարի» այս միֆոլոգեմը օգտագործում էր նաև Իմամ Խոմեյնին՝ իրանցիներին Իրան-իրաքյան պատերազմին մասնակցելու կոչ անելիս: Իր ճառերում

[33] Նույն տեղում:
[34] Նույն տեղում:
[35] Նույն տեղում

նա նշում էր պատերազմի էության վերպետական լինելն ու դրա կրոնական երանգները[36]։

Իրաքի շիական սրբավայրերի պաշտպանությունն ու այդ պաշտպանությունը կազմակերպելու համար ժողովրդական ռազմուժի կիրառումը շիա հոգևորականների ուղերձների կարևոր բաղկացուցիչներից մեկն է։ Մեծն այաթոլլահ Ալի Սիսթանին Իրաքում սկսված ահաբեկչական գործողությունների հենց սկզբից ֆաթվա[37] հրապարակեց առ այն, որ «բոլոր իրաքցիները հնարավորության դեպքում զինվորագրվեն իրենց երկիրը, իրենց ժողովրդին ու սրբավայրերը *պաշտպանելու* համար[38]»։ Թեև արևմտյան ու արաբական մի շարք երկրների մամուլը ֆաթվան ներկայացրեց որպես կոչ շիաներին՝ պայքարել ընդդեմ սուննիների[39], սակայն ֆաթվան, իրականում, շիական աշխարհընկալմանը չհակասող՝ պաշտպանական գործողությունների կոչ պարունակող ուղերձ էր՝ այն էլ ոչ միայն շիաներին ուղղված, այլև Իրաքի ողջ բնակչությանը։ Թյուրընկալումներից խուսափելու համար Սիսթանիի ներկայացուցիչներից մեկը ֆաթվան հրապարակելուց մի քանի օր հետո պարզաբանում տվեց և բացատրեց ֆաթվայի իմաստն ու նշանակությունը։ Զինվելու ուղերձ պարունակող ֆաթվաները

---

[36] Rieffer-Flanagan B. A., Islamic realpolitik:two-level Iranian Foreign Policy, *International Journal on World Peace*, Vol. 26, No. 4 (DECEMBER 2009), p.12.

[37] ֆաթվան կրոնական կամ քաղաքացիական կոնկրետ և պրակտիկ տարբեր իրողությունների հետ կապված իսլամական տեսակետը ներկայացող եզրահանգում է, որն ունի խորհրդակցական բնույթ և կատարման համար պարտադիր չէ։

[38] تازه‌ترین فتوای آیت‌الله سیستانی درباره جهاد در عراق http://www.khabaronline.ir/detail/361725/World/middle-eas, (մուտք՝ 01.07.2014).

[39] Տես օրինակ. Iraqi Shiite Cleric Issues Call to Arms http://www.nytimes.com/2014/06/14/world/middleeast/iraq.html?_r=0, (մուտք՝ 14.07.2014), After years off-stage, Iraq's Sistani takes charge, http://www.reuters.com/article/2014/06/29/us-iraq-security-clerics-insight-idUSKBN0F30KX20140629, (մուտք՝ 30.06.2014):

հաճախ մեկնաբանվում են որպես շիաներին ուղղված ջիհադի կոչեր: Սակայն պետք է ընգծել, որ շիաները, ի տարբերություն սուննիների, այն համոզմունքն ունեն, որ ջիհադի կոչ կարող է անել միայն ժամանակի իմամը: Իսկ ժամանակակից «ժամանակի իմամը»՝ Մահդին, թաքուցման մեջ է արդեն տասներկու դար: Իմամ Մահդիի բացակայության պայմաններում շիաներին առաջնորդող այաթոլլահները միայն պաշտպանական ջիհադի կոչ կարող են հղել, ինչն էլ արել էր այաթոլլահ Սիսթանին: Հատկանշական է նաև, որ թեև Իրանի ղեկավարությունը առանձնապես չարձագանքեց Սիսթանիի ֆաթվային, բայց Իրանի փոքրաթիվ ընդդիմադիր հայացքներ ունեցող այաթոլլահներից մեկը՝ մեծն այաթոլլահ Յուսեֆ Սանային ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ ողջունեց Սիսթանիի նախաձեռնությունը[40]: Միաժամանակ, այաթոլլահ Սանային էլ իր ճառում ընդգծեց, որ ահաբեկչական տարրերի գործողություններն Իրաքում ոչ միայն շիաների ու սուննիների, ոչ միայն ամբողջական ու միասնական Իրաքի, այլև ողջ աշխարհի մարդկության դեմ է, և որ նրանց դեմ պետք է պայքարեն բոլորն անխտիր[41]: «Ես, որ իսլամի արժեքներն ու գաղափարները սերտելով եմ ճերմակել, վստահեցնում եմ՝ սրանց ու սրանց նմանների արարքները որևէ կապ չունեն իսլամի հետ: Իսլամը նրանց համար միջոց ու գործիք է իրենց նպատակներին հասնելու համար»[42]:

Մեծն այաթոլլահ Նասեր Մաքարեմ Շիրազին հանդես եկավ կարծիքով, որ «Իրաքում տեղի ունեցող իրադարձությունները «լավ առիթ» հանդիսացան աշխարհազոր ստեղծելու ու Իրաքի բանակի

---

[40] حمایت آیت الله العظمی صانعی از مواضع آیت الله العظمی سیستانی در قبال تحولات عراق http://saanei.org/?view=01,00,00,00,0#01,01,01,131,0, (մուտք՝ 10.09.2014):

[41] Նույն տեղում

[42] Նույն տեղում

կողքին ահաբեկիչների դեմ պայքարելու համար»[43]: Այաթոլլահ Մաքարեմ Շիրազին առանձնակի ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անընդունելի է իսլամական եզրը կցել մի կազմակերպության անվանը, որը բացի վնասից, ահ ու սարսափից, վախից ու մահվան սպառնալիքից, ուրիշ ոչինչ չի տալիս իսլամին ու մուսուլմանին: Նրա համոզմամբ ահաբեկչական այդ կազմակերպությանը «Իսլամական պետություն» կոչելը նույնպես Արևմուտքի՝ հակաիսլամական քաղաքականության տարրերից մեկն է. այդպիսով իսլամի թշնամիները վարկաբեկում են իսլամն ու մուսուլմաններին[44]: Իր ելույթներում մեծն այաթոլլահ Մաքարեմ Շիրազին աշխարհաքաղաքական իրադրությունները ներկայացնում է փոխաբերական կերպարների ու իրադրությունների վառ համեմատություններով. ԱՄՆ քաղաքականությունը ԻՊ-ի առնչությամբ այաթոլլահը համեմատում է մեղադրյալի հետ, որ նստել է դատավորի աթոռին: «Իրենք ստեղծեցին այդ ահաբեկչական տարրը, իրենք ֆինանսավորեցին ու զինեցին, այսօր էլ տպավորություն են ուզում ստեղծեն, թե պայքարում են ահաբեկիչների դեմ»[45]:

Ոչ միայն բոլոր մուսուլմանների, այլև աշխարհի ողջ ողջամիտ հանրության ուշադրությունը ահաբեկիչների գործողությունների վրա սևեռելու ու համատեղ ուժերով դրանց դեմ պայքարելու անհրաժեշտությունը կարևորելով ու ընդգծելով՝ այաթոլլահ Մաքարեմ Շիրազին բաց նամակով դիմել է Հռոմի Պապ Ֆրանցիսկոսին: Նամակում այաթոլլահը շեշտում է, որ երբ Վատիկանն ու քրիստոնեական տարբեր կազմակերպություններ

---

[43] در ائتلاف ضد داعش جای مجرم و قاضی عوض شده http://makarem.ir/news/?typeinfo=4&lid=0&mid=326445&catid=0&start=1&PageIndex=0, (մուտք՝ 01.10.2014):

[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում:

Միավորված ազգերի կազմակերպությանն են դիմում Իրաքում ու Սիրիայում քրիստոնյաների անվտանգության մտահոգությամբ, պիտի տեղյակ լինեն, որ ահաբեկչական կազմակերպությունները, որ վտանգ ու սպառնալիք են ոչ միայն քրիստոնյաների, այլև այդ երկրների ողջ բնակչության համար, որևէ առնչություն չունեն իսլամի հետ: «Իսլամի մարգարեն իր առաքելությունն էր համարում խաղաղություն բերել աշխարհի ողջ մարդկությանը, իսկ Արևմուտքի որոշ երկրների քաղաքական առաջնորդները ոչ միայն լռում էին, երբ խախտվում էր այդ խաղաղությունը, այլև հաճախ աջակցում ու սնում էին ահաբեկչական տարրերին»[46]:

ԻՊ-ի ստեղծման ու աջակցման գործում Արևմուտքի դերակատարության մասին խոսել է նաև ԻԻՀ-ն հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի աշխատակազմի ղեկավար «*հոջաթ ուլ էսլամ վա մուսլիմին*» Մոհամեդի Գոլփայեգանին:

Նրա խոսքով՝ անկասկած է, որ ԻՊ-ի արմատները թաքնված են Արևմուտքում. այդ է վկայում հատկապես այն փաստը, որ շիաները «քյաֆիր» են հայտարարվել ԻՊ-ի կողմից՝ նպատակ ունենալով ոչնչացնել Իրաքի շիա բնակչությանը[47]: Մոհամեդի Գոլփայեգանին անդրադարձավ նաև ԻՊ-ի այն հայտարարությանը, թե նրանք այսօր Քերբալան ու Նաջաֆն են ազատագրում, վաղը Մաշհադն են ազատագրելու: Սրան Գոլփայեգանին պատասխանում է, որ «քանի դեռ Իրանը այսքան հզոր ու ուժեղ է, ոչ ոք չի համարձակվի ոտնձգություն կատարել նրա հողերի ու նաև շիաների սրբավայրերի նկատմամբ»[48]:

Սահմանադրության համապատասխանությունը վերահսկող հանձնաժողովի նախագահ այաթոլլահ Հաշեմի Ռաֆսանջանին իր

---

[46] Նույն տեղում:

[47] محمدی گلپایگانی: داعش ریشه در خوارج دارد http://www.irna.ir/fa/News/81347191/, (մուտք՝ 01.10.2014):

[48] Նույն տեղում

մամլո ասուլիսներից մեկի ժամանակ անդրադառնալով ԻՊ-ին նշում է, որ նրանք իրենց իսլամական կոչելով՝ ջանում են վարկաբեկել իսլամը, քանի որ ահաբեկչությունն ու մարդասպանությունը աշխարհին ներկայացնում են որպես իսլամ[49]: Մեկ ուրիշ ելույթի համատեքստում այաթոլլահ Ռաֆսանջանին նշում է. «Բոլորն էլ գիտակցում են, որ «դաեշ»-ի չարիքից հնարավոր չէ ազատվել առանց Իրանի օգնության: Այնպես, ինչպես Իրանի օգնությամբ ազատագրվեց Մոսուլի ջրամբարը, այնպես էլ միայն Իրանի օգնությամբ հնարավոր է հաղթել «դաեշ»-ին»:[50]

«Դաեշ»-ի դեմ պայքարելու քողի տակ, այդ ահաբեկչական կազմակերպությանը սատարելու, զինելու ու ֆինանսավորելու մեջ Արևմուտքին մեղադրող հայտարարությամբ է հանդես եկել նաև Իրանի Իսլամական Հանրապետության դատական համակարգի ղեկավար Սադեղ Լարիջանին: Նրա համար ևս, անկասկած է, որ «Արևմուտքը իսլամական աշխարհում երկպառակտություններ սերմանելու ու տարածաշրջանում իր շահերն առաջ տանելու համար է ստեղծել ահաբեկչական այդ կազմակերպությունը»[51]:

Իրանի հոգևորականների՝ ԻՊ-ի գործողությունների մեկնաբանման մեջ կարելի է տեսնել նաև մեկ այլ միֆական

---

[49] هاشمی رفسنجانی:داعش به دنبال از بین بردن آبروی اسلام است
http://isna.ir/fa/news/93042112371/%D9%87%D8%A7%D8%B4%D9%85%DB%8C-%D8%B1%D9%81%D8%B3%D9%86%D8%AC%D8%A7%D9%86%DB%8C-%D8%AF%D8%A7%D8%B9%D8%B4-%D8%A8%D9%87-%D8%AF%D9%86%D8%A8%D8%A7%D9%84-%D8%A7%D8%B2-%D8%A8%DB%8C%D9%86-%D8%A8%D8%B1%D8%AF%D9%86, (մուտք՝ 25.10.2014):

[50] شرّ داعش جز با کمک ایران از بین نمی رود
http://www.hashemirafsanjani.ir/content/%D8%B4%D8%B1%D9%91-%D8%AF%D8%A7%D8%B9%D8%B4-%D8%AC%D8%B2-%D8%A8%D8%A7-%DA%A9%D9%85%DA%A9-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A7%D8%B2-%D8%A8%DB%8C%D9%86-%D9%86%D9%85%DB%8C-%D8%B1%D9%88%D8%AF, (մուտք՝ 30.10.2014):

[51] صادق لاریجانی: تجزیه هم به ضرر عراق و هم به ضرر کردهای این کشور است
http://news.gooya.com/politics/archives/2014/07/182792.php, (մուտք՝ 30.10.2014).

դրվագի ակտուալացում՝ Ալիի դեմ պայքարող «չար ուժերի» մասին միֆը: ԻՊ-ի գործողությունները Ալիի դեմ կատարված ոտնձգությունների հետ համեմատելով՝ այաթոլլահները նպատակ ունեն արթնացնել ու վերաիմաստավորել Ալիի հետևորդների՝ շիաների միասնական ոգին ու Ալիի հակառակորդների դեմ պայքարելու պատրաստակամությունը: Պատահական չէ, որ Մեծն այաթոլլահ Հաշեմի Շահրուդին, անդրադառնալով «դաեշ»-ին, նշում է, որ նրանք ժամանակի «խարիջիներն» են: Հաշվի առնելով, որ խարիջիները Ալիից երես թեքած ու այնուհետև նաև նրան սպանած կրոնական ուղղության հետևորդներն են, «դաեշին» խարիջիներ անվանելով՝ այաթոլլահ Շահրուդին նրանց կերպարում ընդգծում է հակաալիական, հակաշիական բնույթը՝ նրանց դարձնելով շիաների ատելության ու վրեժխնդրության օբյեկտ:

Այաթոլլահ Մոհամադ Թաղի Մեզբահ-Յազդիի կարծիքով էլ «դաեշի» հետևորդները՝ «այդ մոլորյալ մարդիկ, երկնային այն կերպարների երկրային փոխանորդներն են, որոնց արարման ժամանակ հրեշտակները հակակրանք էին ապրում»[52]:

Այսպիսով, Իրանի ղեկավարության ու շիա հոգևորականների արձագանքները ԻՊ-ի գործողություններին ունեն առանցքային երկու առանձնահատկություն: Նախ և առաջ, նրանք բոլորն իրենց ելույթներում շեշտում ու փաստում են, որ ԻՊ-ը որևէ կապ չունի իսլամի ու մուսուլմանների հետ և ընդգծում են ԻՊ-ի ստեղծման ու զարգացման գործում ԱՄՆ և Սաուդյան Արաբիայի դերն ու տարածաշրջանի երկրներին կոչ անում զգոն լինել ու թույլ չտալ այս երկրներին միջամտել իրենց ներքին հարցերին:

Եվ, երկրորդ, ընդգծում են Իրանի առանցքային ու կարևոր դերը ահաբեկչության ու հակահիսլամական կառույցների ու դրանց

---

[52] ملائکه از خلقت گروهک تروریستی داعش بیزار بودند
http://www.farsnews.com/newstext.php?nn=13930502000032, (մուտք՝ 30.10.2014)

հակամարդկային գործողությունների դեմ պայքարում: Այս ուղերձները իրանցիները, որպես կանոն, ձևակերպում են կրոնադիցաբանական կերպարների ու իրադարձությունների հետ համեմատություններ անելով՝ այդպիսով ավելի ակներև ու խորհրդանշական դարձնելով ԻՊ-ի հակաիսլամական, հակաշիական ու հակաիրանական բնույթը:

## IRAN'S RESPONSE TO THE ACTIVITIES OF THE "ISLAMIC STATE"

Summary

*Anna Gevorgyan*

Article aims to analyze the mythological aspects of Iran's response to activities of "Islamic State" organization. The representatives of Islamic State of Iran often use mythological approach to the representation of the political processes in the Islamic world and to the role of Iran in those processes.

Thus, Iran sees the role of the "shaytan" in the activities of "Islamic State" organization and puts them in the context of conspirological mythologem and assigns a unique role to itself for the overcoming of the "shaytan".